




“ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆԲ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՄԻ ՊԱՆ” ԳՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ Ժ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 1, 1881

ԹԻՒ 9



ԵԳԻՊՏԱԿԱՆ ԿՈԹՈՂ ՄԸ

Մեր պատկերը կը ցուցնէ Եգիպտոսի Աղեքսանդրիա քաղաքին մէկ մասը: Այլևայլ նշանադիրներով և նկարներով ծածկուած բարձր սիւնը Եգիպտական կոթող է, բայց ո՞վ կրնայ ըսել անոր պատմութիւնը: Ուրիշ այսպիսի կոթողներ, ոմանք փոքր, ոմանք մեծ, արդէն գտնուած են Եգիպտոս: Ասանց մին կը տեսնուի Կոստանդնուպոլիս: Եգիպտական կո-

թողներ կան նաև Հռոմ, և կոթող մը Լոնտոն, իսկ այն որոյ պատկերը կը տեսնուի հոս՝ հիմա Ամերիկայի Նիւ Եորք քաղաքին Կեղրոնական պարտէզին մէջ է: Եգիպտոսի խրոխն ընծայ ըրաւ զայն Ամերիկայի միացեալ Նահանգաց կառավարութեան: Այս կոթողն է միակտուր քարէ, իբր 70 ոտք երկայն և ծանրութիւնն է իբր 16,000 քաշ: Իսկ գալով կոթողին պատմութեան, սաչափ միայն

գիտենք որ կոթողը կանգնուեցաւ Հեղիոպոլիս (մտա ի Փահիրէ) աւելի քան 1,300 տարի յառաջ քան դժբութիւն մէջ Գ. անուն թագաւորէ մը, և յետոյ բերուեցաւ Աղեքսանդրիա Հռոմայեցի կայսեր մը հրամանաւ: Մինչև քիչ տարիներ յառաջ ոչ ոք կրնար կարգալ կոթողին փայ քան դակուած գիշը, որ էր վարուց կորսուած լեզուաւ. բայց փութով և ուրիշ լեզուաց գրուածներէն լոյս առ-

ներով, ոմանք կարող եղան Եգիպտոսական կոթողներուն արձանագրութիւնները կարգաւ ըստ բաւականին :

Ինչ զարմանալի է հին յիշատակարան մը զոր թերեւ Մովսէս տեսած էր Եգիպտոս՝ փոխադրուած տեսնել հիմա, այսինքն կոթողին կանգնուելէն իբր 3,000 տարի ետքը, արեւելեան ազգաց բոլորովին անծանօթ երկիր մը : Այսպիսի բազմադարեան յիշատակարանի մը տարիներուն քով մարդկային երկայնագոյն կենաց տարիներն անգամ սրշափ կարճ են :

ԻՆՏԻ՝ ՊԵՍ, ԻՆՏԻ՝ ՊԵՍ

Հարաւային Ափրիկէի մէջ աղքատ Հոգէնդայի մը կը բնակէր բարի մարդու մը քով որ սովոր էր ամէն օր աղօթել ընտանեօք : Այս մարդն օր մը կը կարդար տաճարին մէջ աղօթող փարիսեցւոյն և մաքսաւորին պատմութիւնը «Երկու մարդ» ըսաւ, «Երան տաճարը աղօթք ընելու :

Ափրիկեցին որ ուշադրութեամբ մտախի կ'ընէր՝ ըսաւ մտքէն, «Հիմա պիտի սորվիմ աղօթք ընել :

Մարդը յառաջ տարաւ ընթերցումը «Ով Աստուած, շնորհակալ եմ քեզմէ, որ ուրիշ մարդոց պէս չեմ :

«Ոչ» ըսաւ մտքէն վայրենին, «Ես այնպէս չեմ, ես չար եմ :

Երբ կարգը եկաւ սա խօսքին, «Շարաթը երկու անգամ ծով կը պահէմ, ու բոլոր ստացուածիս տասանորդը կու տամ» Ափրիկեցին որ մտիկ կ'ընէր՝ ըսաւ մտքէն տարակուսեալ, «Ես այս բաները չեմ ընէր, ինչպէս աղօթք ընեմ ուրեմն :

Կարգացողն յառաջ տանելով ընթերցումը, եկաւ մաքսաւորին օրոյ համար գրուած է թէ, «Չէր ուզեր աչքը երկինքը վերցնել :

Երբ այս խօսքը լսեց Ափրիկեցին, դռնէ, «Ինձի՛ պէս, ինձի՛ պէս :

«Հեռուն կայներ էր» ըսաւ ընթերցողը :

Գարձեալ, «Ինձի՛ պէս, ինձի՛ պէս» գռնեց Ափրիկեցին :

Վերջապէս ըսաւ, ընթերցողը, «Հապա իր կուրծքը ծեծելով կ'ըսէր, Աստուած, ողորմէ ինձի մեղաւորիս :

«Այս է իմ աղօթքս, այսպէս միայն կրնամ աղօթել» ըսելով Ափրիկեցին, սկսաւ ծեծել իւր սե կուրծքը և ըսել, «Աստուած, ողորմէ ինձի

մեղաւորիս :» Անտարակոյս այն խոնարհ մաքսաւորին պէս նաև այս զղջացեալ վայրենին «արդարացած իր տունը իջաւ» փրկեալ և երջանիկ :

ՏՂԱՅՔ ԵՒ ԸՆՃՂՈՒԿՔ (Թուրքերէնէ Խարճանուած)

Տղայք, դուք շատ թռչուններէ գերազանց էք : Այս ըսել չէ թէ ձեզ Աստուած ստեղծած է, և ճնճողկներն Աստուած ստեղծած չէ : Աստուած ստեղծած է ինչ որ կայ աշխարհի մէջ, սողուն, թռչուն, անասուն և այլ ամենայն : Նախ կ'ուզեմ ցուցնել թէ ինչ մասերու մէջ դուք չէք գերազանց քան զճնճողկս :

1. Դուք գերազանց չէք քան զթռչունս վասն զի քան զնոսա աւելի մեծ էք, քանզի բանի մը արժէքը մեծութենէն կախում չունի :

2. Դուք չէք գերազանց քան զթռչունս վասն զի քան զնոսա գեղեցիկ հանդերձներ ունիք, քանզի դուք չունիք թռչնոց հանդերձներուն չափ գեղեցիկ հանդերձներ : Նոյն խակ Սուրբան իւր բոլոր փառաց մէջ չհաղուեցաւ այնպէս գեղեցիկ ինչպէս սիրամարդը :

3. Դուք գերազանց չէք քան զթռչունս վասն զի քան զնոսա աւելի քաղցր կ'երգէք, քանզի սոխակին, արտուտին և այլ շատ թռչնոց ձայները քաղցրագոյն են քան զձեր ձայն :

4. Դուք գերազանց չէք քան զթռչունս վասն զի քան զնոսա աւելի կ'ապրիք, քանզի շատ փոքր տղայք ճնճողկանց պէս շուտ կը մեռնին : Նաև կրտսի թէ կան թռչուններ որ ծերունի մարդոց չափ երկար կ'ապրին :

Հապա ինչ մասերու մէջ դուք գերազանց էք քան զթռչունս : Ահա պատմեմ :

1. Դուք գերազանց էք քան զթռչունս վասն զի խորհող միտք ունիք : Թռչունք իրենց կեր գտնելու, գեղեցիկ բոյներ չինելու և ուրիշ բաներ ընելու ճարտարութիւն ունին : Աստուած այս ճարտարութիւնը տուած է անոնց : Բայց թռչունք ձեզի պէս չեն կրնար խորհիլ, քանզի միտք չունեն : Երբեմն շատ խելացի տղայք գտնուած են աշխարհի մէջ : Եսայի անուն փոքրիկ տղայ մը շատ իմաստուն էր, մեծ յաջողութեամբ կը քննէր աստղերը, օգը և երկիրը : Ո-

մանք ծառոց և ծաղկանց, ոմանք թռչնոց և անասնոց, այլք ուրիշ բաներու վրայ քննութիւններ կատարելու մասին յաջողակ են : Նաև դուք ձեր միտքերը գործածելու էք Աստուծոյ վրայ գիտութիւն ստանալու : Աստուծոյ խօսքը ձեզ կը սորվեցնէ թէ Աստուած բարի, սուրբ, գթած, հզօր, իմաստուն և յաւիտենական է, և միշտ իւր բարութեամբ կը ընու զաշխարհ : Չկայ գիտութիւն աւելի պատուական և աւելի օգտակար քան այս բաները գիտնալ : Ո՛հ, դուք թռչուններէն սրշափ գերազանց էք :

2. Դուք գերազանց էք քան զթռչունս վասն զի անմահ հոգի ունիք : Երբ մեր Տէրն աշխարհի վրայ էր, երկու ճնճողկ մէկ դանկի կը վաճառուէին : Արդարև այս գինը շատ աժան է : Բայց ո՛վ կրնայ գին կրարել հոգւոյ համար որ յաւիտեան պիտի ապրի : Եթէ խելացի տղայ մը քարէ տախտակը թռանչաններով լեցնէ և այն թռանչանները գումարէ, անոնց գումարը չկրնար հաւասար ըլլալ հոգւոյ արժէքին : Եթէ աշխարհի վրայ գտնուած բոլոր դրամներն, աղամանները, մարդարիտներն և թագաւորաց թագերուն պատուական քարերը մէկտեղ բերէք, անոնց արժէքն ալ չկրնար հաւասար ըլլալ հոգւոյ արժէքին :

3. Դուք գերազանց էք քան զթռչունս վասն զի զձեզ սիրող Փրկիչ մ'ունիք : Աստուած այնչափ սիրեց զաշխարհ որ իւր միտքին Որդին տուաւ, որպէս զի մենք անոր հաւատարմով ազատինք մեզքէ : Կոր ժամանակ որ ամէն մարդու հոգին կորսուելու վտանգի մէջ էր, քանզի բոլոր մարդիկ մեղաւոր էին : Բայց Աստուած որ մեր հոգւոյն բուն արժէքը գիտէ, և զայն պատուական կը համարի քան զարև, զլուսին և զստեպս, ուզեց որ մեր հոգին փրկուի ոչ թէ ոսկով և արծաթով, այլ Յիսուս Քրիստոսի պատուական արեամբ : Յիսուս սիրեց մեր հոգին, և անոր համար մեռաւ, և հիմա բարեխօսութիւն կ'ընէ անոնց համար որ անոր միջոցաւ կ'երթան Աստուծոյ և Աստուծոյ խօսքը կ'ըսէ թէ Ան որ կը հաւատայ Քրիստոսի՝ պիտի փրկուի :

4. Դուք գերազանց էք քան զթռչունս վասն զի փառաւոր տուն մ'ուն-

նիք յախտեան անոր մէջ բնակելու : Այս բնակարանը պատրաստուած է անոնց համար որ աշխարհի վրայ կը սիրեն զՔրիստոս :

Մեծ օրհնութիւն է Աստուծոյ հետ ըլլալ , և անոր ծառայել : Անոնք որ երկինքն են բարութեամբ , սրբու-

թեամբ և սիրով կը նմանին Աստուծոյ , և ունին անթաւաճ պատկեր և յախտեան երանելի են : Ասոնց համար չկայ այլևս ցաւ , վիշտ , մեղք և մահ , և անոնց սէրն երբեք պիտի չըպակսի , և անոնք պիտի փառաւորեն Աստուծոյ Գառն եւ յախտեան պիտի ապրին անոր հետ : Եթէ Աստուած շատ չը սիրէր զքեզ պիտի չը հրախրեր զքեզ այսչափ ուրախութեանց և բերկրութեանց : Չե՞ս ուզեր երկինք երթալ : Եթէ հոն երթալ կ'ուզես , բարի եղիր , և յախտեան երջանիկ պիտի ըլլաս : Սակայն յիշէ թէ երկինք պիտի չմտնեն անոնք որ շար են , մեղաց մէջ կ'ապրին և ապականեալ սիրտ ունին :

նոր տերևներուն , տերևներն իսկոյն կը գոցուին , և կարծես թէ կը թաւաւին : Միւսողայի նման շատ սուռկեր կան նաև որ միջատ ուտող սուռկեր կոչուին և զգայուն գործարաններ ունին : Այս պատկերին ձախակողմեան անկիւնը կայ ճակատը կոչուած

գան իրարու , և անոնց վշտա եղբրքը կը կցին և տերևը կը գոցուի , և ճանճը կը բռնուի իբրև ծուղակի մէջ : Բռնուած միջատը կը մեռնի , և տերևը կ'ուտէ ճճին որ կ'ըլլայ սուռկին սնունդ : Կայ այս տեսակ տնկոց ուրիշ տեսակ մը որ կը կոչուի « Երկուց » : Այս-



պէս կոչուած է , վասն զի տերևները դուրս կուտան իրենց երեսին վրայ խիժային հեղուկ մը որ կը նմանի ցողոյ : Երբ միջատներ կը նրստին այս տերևներուն վրայ , կը փակչին կը մընան այն մաճանող նութին , և տերևին մազանման թելերը կը ծածկեն միջատը , նոյն իսկ տերևը տակաւ կ'ամփոփուի , և ճճին մէջը մնալով կը մեռնի :

Այս տեսակ տնկոց մէջ զարմանալի է մանաւանդ « Երկուց » կոչուած սուռկը : Այս սուռկը կը տեսնուի մեր պատկերին վերի մասին մէջ : Այս սուռկին տերևներուն ծայրերէն կը ցըցուին դուրս երկայն և նուրբ ցողուններ , որոց ծայրը կամ դուրսը կայ սա-

ՄԻՋԱՏ ՌԻՏՈՂ ՏՈՒՆԿԵՐ

Այս պատկերին մէջ կը տեսնուին այլեայլ տեսակը տնկոց որ միջատ ուտող կը կոչուին : Ընթերցողք թերևս տեղ մը տեսած են Գիւլ կոչուած սուռկը , որոյ տերևը շատ զգայուն են : Եթէ մեզմով անգամ դպչիս ա-

տունը : Ինչպէս կը տեսնուի , այս սուռկին ցողոյն մօտ տերևները երկփեղկ են , անոնց եղբրքը կան փուշեր , և տերևին վերին մասը ծածկեալ է մազանման երկայն և նուրբ թելերով : Երբ ճանճ կամ ուրիշ մանր ճճի կը դպչի այն թելերուն , տերևին երկու փեղկերը կամ խաւերն իսկոյն կու-

փոր , այսինքն խորով ի ձև սափորոյ , որ երբեմն բաւական մեծ է մինչև կրնայ պարուծակել փոքր գաւաթ մը լեցուն ջուր : Այս սափորին մէջի երեսէն դուրս կ'ելլէ անոյշ հեղուկ մը որ իրեն կը ձգէ միջատները : Միջատը կը մտնեն սափորին մէջ և անոր բաւակ թելերէն բռնուելով չեն կրնար

դուրս ելլել, կը խղզուին կամ կը մեռնին անօթութենէ այն բանտին մէջ, և անոնց մարմինը կը սնուցանէ տունկը:

Միջատ ուտող այս տունկերէն ու մանր կը բուսնին ջրոյ մէջ, և կերակրոյ համար կ'որսան մանր մանր ջրակեաց անասուններ, և որ աւելի զարմանալին է, կան միջատ ուտող տունկեր որ իրենց ծուղակներն ունին գետնին տակ, և հողին մէջ ապրող ճճիները որսալով կ'ուտեն:

ՏԺԳՈՂ ՓՈՔՐԻԿ ԱՂՋԻԿԸ

Անցեալ օր կը լսէի որ փոքրիկ աղջիկ մը կ'ըսէր, «Աւա՛ղ, ուզած բանս երբէք չեմ կրնար ձեռք բերել»: Աղջկան այս խօսքին վրայ զարմացայ, քանզի ես կը կարծէի թէ այս աղջիկն ունէր ինչ որ ունենալ կը փափաքէր:

Էր միամօր դուստր և շատ սիրելի անոր հայրը կարող էր կատարել անոր ամէն փափաքը, և կը կատարէր իսկ եթէ պատշաճ տեսնէր: Աղջիկն առողջ էր, աղէկ և մաքուր կը հագնէր, ունէր նաև շատ բարեկամներ:

Օրը երեք անգամ կը նստէր սեղանի համեղ կերակուրներով: Ունէր միջտպածուճապատանք(գորգ), զուարճալի պատկերներ և ամէն տեսակ խաղալիկ: Ինչո՞ւ համար կ'ըսէր ուրեմն, «Ուզած բանս չեմ կրնար ձեռք բերել»:

Վասն զի մայրը չէր թողուր անոր անձրևի ժամանակ դուրս ելլել բան մը զնեղու:

Կ'ուզէի այս աղջկան ձեռքէն բռնելով տանել քաղքին այն ստորին փողոցները ուր աղքատներ կը բնակին, և մտնելով տունէ տուն ցուցնել անոր աղքատ տղոց փիճակը. կարծեմ թէ տժգոհ աղջիկը տուն դառնալէն ետքը պիտի դադրէր գանգատել թէ չունի ինչ որ կը բաղձայ ունենալ:

ՄԵՆՈՒՍԱՅՔ

Ի՞նչ են այս զարմանալի բաները որ կը տեսնուին այս երկու պատկերներուն մէջ: Տո՞նկ են թէ անասուն: Եթովի մօտ բնակողներ կրնան պատասխանել այս հարցման: Ասանք ա-

նասուն են, տեսակ տեսակ են, և անթիւ բազմութեամբ կը գտնուին ովկիանոսի մէջ: Այս պատկերներուն մէջ նկարուած տեսակները կը կոչուին նաև պողիբոզ կամ ծովարուծ: Ասոնց մարմինն է լայժ և մած իբրև պաղած,



գոյնը՝ սպիտակ, երբեմն՝ վարդագոյն կամ գեղեցիկ ծիրանագոյն: Ասոնց մարմնոյն վերի մասն է հովանոցակերպ, զոր գոցելով և բանալով անասունը մեղմով կը շարժի ջուրին երեսը: Ունին փոքր փոքր բերաններ և հովանոցաձև մասը բանալով և գոցելով ծովին մէջ ցիր ու ցան գտնուած ուտելիք կը բերեն բերաններուն մօտ և մէջը:

Այս անասուններէն ոմանք այնպէս



մանր են որ հազիւ կը տեսնուին աշայ, իսկ ոմանց տրամագիծն է մինչև մէկ կանգուն, և անասունը կու գայ քսան քաշ:

Կէտ կոչուած ձկունք կ'ուտեն այս անասունները որ ժամանակ ժամանակ

անթիւ բազմութեամբ կը գտնուին ծովին մէջ, այնպէս որ ջուրին երեսը կ'երևի իբրև ձիւնով ծածկուած:

Կան տեսակներ որ եղիճ կը կոչուին, քանզի կը խայթեն եղճի նման: Կան նաև որ փոսփորային են, այսինքն կը փայլին գիշերը: Երբեմն, ըստ մասնաւոր որպիսութեան միմյուր թափն այս անասուններուն պատճառաւ ջուրը մանր մանր աստղերու նման կայծեր կ'արձակէ, և կամ կրակի հետք կը տեսնուին ջուրին երեսը, որ գեղեցիկ տեսարան կ'ընծայէ աշայ:

Այս անասունները ծանծաղուտ տեղեր կ'ածեն իրենց ձուերը, որ ջուրին յատակն իջնելով կը փակչին քարերու կամ խեցիներու: Քիչ ետքը ձուէն կ'արձակի բարակ բուն մը իբրև տունկի ստեղն, և այս բնոյն կամ ստեղան գլուխը կը բուսնին իրարու մէջ հարթ տաշտաձև մանր մանր բաժակներ: Քիչ ետքը վերի բաժակը կ'ըլլայ կատարեալ փոքրիկ մետուսա, և արձակուելով բնէն կը սկսի լողալ, յետոյ երկրորդ բաժակը, յետոյ երրորդը, և այսպէս հետզհետէ բոլոր բաժակները, ըլլալով մի մի մետուսա կ'արձակուին իրենց բնէն: Այսպէս կը տեսնուի որ այս զարմանալի փոքրիկ արարածն ըստ իմիք կը նմանի սնկոյ, թէպէտ ի բնէ անասուն է և ոչ տունկ:

ԱՒԵՏԱԲԵՐՆԵՐՈՒ ԳԻՆՆԵՐԸ

ԱՄՍԱԿԱՆ (Հայերէն, Հյ. Յ. Էրժ Տաճկերէն և Պոլսերէն), փոսթայի ծախքով, տարին 1/4 մէճխալիէ:

ՇԱԲԱԹԱԿԱՆ (Հայերէն, Հյ. և Յ. Էրժ Տաճկերէն) փոսթայի ծախքով, տարին 1 1/2 արծաթ մէճխալ: 10 առ 100 զեղչ կ'ըլլայ անոնց որ 100 դաճեկանի կամ աւելի լրագիր կ'ապսպրեն, եթէ լրագիրք մէկ անձի ուղղուին:

Ամբիկայի Միտինարաց բնիկութեան կողմէն Խմբագիր ձ. Ք. ԿՐԻՆ Ֆիլանտրոփ եօգուշու, Ամբիկան Խան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏԵԿՆՈՒԹԻՒՆ Ա. ՅԱՊՈ ՊՕՍԵՏԱՆ